Իսահակյան

Վարչական ղեկավար՝ Արտավազդ Արսենյան

Հեռ 098 29 09 58

Մակերես՝ 22.13կմ^2

Բնակչություն՝ 957

isahakyan.shirak@mta.gov.am

Համայնքի ներկայիս անվանումը – Իսահակյան
Համայնքի պատմական անվանումները- Խարում, Ղազարապատ
Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը – 1826-1828
Որ համայնքներին է սահմանակից համայնքը – Լուսաղբյուր, Աղին, Սարակապ, Մարալիկ
Հեռավորությունը մայրաքաղաքից- 120 կմ
Հեռավորությունը մարզկենտրոնից – 27 կմ
Համայնքի նշանավոր մարդիկ – բանաստեղծ Ավ. Իսահակյան, վիրաբույժ Վրույր Փենեսյան
Կրթական հաստատություններ – միջնակարգ դպրոց, մանկապարտեզ /չի գործում, ենթակա է հիմնանորոգման/
Մշակութային հաստատություններ – մշակույթի տուն /չի գործում, ենթակա է հիմնանորոգման/
Բնակչության հիմնական զբաղմունքը – գյուղատնտեսություն և անասնապահություն
Հոգևոր կառույցներ – Սուրբ Աստվածածին եկեղեցի, Պողոս-Պետրոս եկեղեցի
Շիրակի մարզի Իսահակյան գյուղը հիմնադրվել է 1826 թ.-ին: Գյուղի սկզբնական անվանումը եղել է Խարում: 1826-1928 թթ. ռուս- պարսկական պատերազմի ժամանակ ռուսական զորամիավորումների շարքերում իր քաջությամբ և հնարամտությամբ աչքի է ընկնում հայրուրապետ Ղազարը: Անվանի պատմաբան Լեոն հիշատակում է, որ Ղազարը արժանանում է ռուսական հրամանատարության խրախուսանքին, որից հետո դիմում է Պասկևիչին՝ Օսմանյան կայսրության սահմանագլխին բնակարան կառուցելու խնդրանքով: Ի պատիվ նրա՝ գյուղը վերանվանվում է Ղազարապատ:
1945թ.-ի հունիսի 30-ի ՀՍՍՀ Գերագույն սովետի հրամանագրով, ի պատիվ մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանի, որը ծնվել և իր մանկությունն է անցկացրել Ղազարապատ գյուղում, գյուղը վերանվանվում է Իսահակյան:
Գյուղը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին: Ախուրյանի ջրամբարի կառուցման հետևանքով 1973-ից սկսվեց Իսահակյան ավանի շինարարությունը, 1978-1979թթ. գյուղացիները վերաբնակեցվեցին Իսահակյան ավանում:
1981-ին Բարձրաշեն գյուղի լիկվիդացման պատճառով գյուղի բնակչության կեսը բնակություն է հաստատում Իսահակյան գյուղում: Այժմ Բարձրաշեն գյուղի տարածքը և 450 հա վարելահող գտնվում է Իսահակյան գյուղի վարչական տարածքում: Իսահակյանցիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի և Մուշի գավառների գյուղերից:
Գյուղում կառուցված է Ավ. Իսահակյանի հուշարձանը: Գյուղի վարչական տարածքում են գտնվում Պողոս-Պետրոս եկեղեցին, կառուցված 7–րդ դարում և Աստվածածին եկեղեցին (10-13-րդ դարեր):
Իսահակյան գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1470 մ բարձրության վրա:
Իսահակյանն ունի դպրոց՝ նախատեսված 320 աշակերտի համար, բուժկետ, մշակույթի տուն, նախակրթարան:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Իսահակյան
Ինդեքս՝ 2907